ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 հոկտեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

144
(2810)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԱՐԵՎՈՐԸ ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆՆ Է. ՖՈՒՏԲՈԼԸ ԿՄՊԱՍԻ

Հինգշաբթի Հայաստանի ազգային հավաքականը պարտվեց «Եվրո 2024»-ի իր խմբի հետնապահ Լատվիայի հավաքականին՝ ցուցադրելով իր վատագույն խաղերից մեկը: Նկատենք, որ այսօր ունենք ազգային թիմ, որը նույնիսկ հայախոս չէ. գերիշխում է ռուսերենը, հետո հայերենն ու իսպաներենը, ազգային հավաքականի կազմում դաշտ դուրս եկած խաղացողների հայկական ֆուտբոլային դպրոցը ներկայացնողները փոքրամասնություն են՝ ի հակադրում նատուրալիզացվածների ու սփյուռքում ծնվածների: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի քաղաքականության կամ դրա բացակայության արդյունքում շատ վատ հանդիպումներ են անցկացնում հավաքականի ռեզերվը, վաղվա օրը համարվող տարբեր տարիքային հավաքականները: Այսպես, մինչեւ 17 տարեկանների ազգային հավաքականը հոկտեմբերի 11-ին պարտվում է Իռլանդիայի իրենց հասակակիցներին խոշոր հաշվով (4:0), այսօր կխաղա Շվեյցարիայի դեմ, ու չկա մասնագետ, որը դրական արդյունք է ակնկալում: Այս հավաքականն անցած տարի 7:0 պարտվել է Նորվեգիային, 4:0՝ Իռլանդիային, եւ 2:5 հաշվով ավարտել է խայտառակ պարտությունների շարքը Բելառուսի հավաքականի դեմ խաղում: Խայտառակ պատկեր է նաեւ 21 տարեկանների ազգային թիմի պարագայում. այս թիմի մրցակիցներն են Ռումինիան, Շվեյցարիան, Ֆինլանդիան, ու կրկին լավ արդյունքներ ակնկալելը դժվար է: Չներկայացնելով այս ու մյուս տարիքային թիմերի գրանցած արդյունքները՝ պարզ է, թե ինչպիսին է լինելու մեր ազգային հավաքականի ապագան. հետո գալու են ֆեդերացիայի ղեկավարներն ու ասեն, որ մեր միակ ճանապարհը Սփյուռքի ու նատուրալիզացված «հայերի» հավաքական ունենալն է՝ «դե կադրեր չկան» հիմնավորմամբ: Իսկ կադրեր չկան ֆեդերացիայի աշխատանքի բացակայության պատճառով, որոնք համոզում են, որ կարեւորն այսօր երկու նոր մարզադաշտ կառուցելն է (ինչը միլիարդների շրջանառություն է եւ «անվերահսկելի» ֆինանսներ) ու պատրաստվելը այս տարվա վերջին կայանալիք ՀՖՖ նախագահի հերթական ընտրություններին, որի ընթացքում իշխանությունների ձեռամբ նորից ընտրելու են Արմեն Մելիքբեկյանին, քանզի կարեւոր չէ, թե ինչ արդյունք կա ֆուտբոլում, եւ ինչ խայտառակ ձախողումներ են: Կարեւորն այն է, որ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը գոհ է ոլորտը տապալած Մելիքբեկյանից՝ որպես ինքնուրույնություն չդրսեւորող ղեկավար:

Երեկ տեղի ունեցավ Երեւանի նորընտիր քաղաքապետ Տիգրան Ավինյանի երդմնակալության արարողությունը, որի ավարտից հետո վերջինս պատասխանեց լրագրողների հարցերին: Կադրերի ընտրության մասին հարցերից մեկին ի պատասխան՝նորընծա քաղաքապետը հեգնեց. «Ինչքան հարազատ «պրառաբ» ու մեբելի դիզայներ կար, վաչության պետ էր էստեղ»: Աշղեկի մասին ակնարկելով՝Ավինյանը, ամենայն հավանականությամբ, նկատի ուներ Հայկ Մարութանի ժամանակ շինարարության ու բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանին, ում մասին տեղեկություններ էին տարածվել, թե հայտնվել է այդ պաշտոնին՝բացառապես շնորհիվ այն բանի, որ ժամանակին զբաղվել է Կարգին Հայկոյի՝Հյուսիսային պողոտայի տան վերանորոգման աշխատանքներով, ու դա բավարար էր, որպեսզի այդ մարդը նշանակվեր նման պատասխանատու աշխատանքի: Ի դեպ, ուժային կառույցների մեր աղբյուրները հայտնում են, որ մի քանի օր է, ինչ քաղաքապետարանի համապատասխան փաստաթղթեր են ուսումնասիրվում, եւ արդեն իսկ կան բավական հետաքրքիր տվյալներ, որոնք խոսում են Մարությանի իշխանության տարիներին շինարարական տենդերների կազմակերպման ու անցկացման խախտումների, խոշոր գումարների ծախսման մասին: Օրինակ՝ առանց նախագծման, վերանորոգել են Կորեայի ձորի կամուրջը, առանց նախագծման աշխատանքների, երեք տարի ճանապարհների նորոգում են անցկացրել՝ընդհանուր շուրջ 12 մլրդ դրամ արժողության: Ուժային կառույցների մեր աղբյուրները հայտնում են, որ Մարությանի օրոք՝2021թ.-ին, Մալաթիա-Սեբաստիա համայնքի՝Մեծ Հայրենական պատերազմի հաղթանակի 40-ամյակին նվիրված հուշարձանի շինարարության մրցույթ են հայտարարել՝չունենալով հիդրոտեխնիկական նախագիծ: Ըստ նախնական ուսումնասիրությունների՝Մարությանի «պռարաբի»՝վարչության պետ եղած ժամանակ «անհասկանալի» պատճառներով ճանապարհաշինական մրցույթներ են շահել հիմնականում նույն մարդիկ, յուրաքանչյուրը՝3-4 լոտ: Թե մինչեւ ուր կհասնեն ուժային կառույցները Երեւանի նախկին քաղաքապետի կառավարման տարիներին տեղի ունեցած միլիարդների բյուջետային շարժի գործով, ցույց կտա ժամանակը: Մենք շարունակելու ենք տեղեկությունների ուսումնասիրությունը եւ դրանք մեր ընթերցողին ներկայացնելը:



ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մանուկյանը պաշտոնի նշանակվել է 2018 թվականի հունիսին: Նա այն պաշտոնյաներից է, որ, թեեւ եղավ իշխանափոխություն, եւ փոփոխվեց ամբողջ կառավարական համակարգը, նա, միեւնույնն է, մնաց նույն ոլորտում եւ չընկավ ոլորտից ոլորտ: Նա իր կարիերան սկսել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մեթոդաբանության եւ տեղեկատվության վարչության ուղղակի հարկերի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնից: Աստիճանաբար բարձրացել է, բաժնի պետ է դարձել, ապա մնալով նույն ոլորտում՝աշխատանքի է անցել ՀՀ ֆինանսների նախարարության վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի եւ սպասարկման վարչության պետի տեղակալի պաշտոնում: Փոխնախագահը Երեւանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում հայտարարագրել է մեկ բնակարան բազմաբնակարան շենքում եւ ավտոտնակ, որոնք ժառանգություն է ստացել, սակայն ուշից՝Մանուկյանը չի նշել: Հայտարարագրից տեղեկանում ենք, որ Մանուկյանն ունի նաեւ հիփոթեքով բնակարան Երեւանի Արաբկիր վարչական շրջանում, որի մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 22 մլն 486 հազար դրամ: Մանուկյանի հանձնված եւ վերադարձված փոխառությունները կազմել են 28 մլն 217 հազար դրամ, որը «Օրդ Դեվելոփմենթ» ՍՊԸ-ից է: Նրա բանկային ավանդները կազմել են 5 մլն դրամ, բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 272 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները կազմել են 11 մլն 50 հազար դրամ եւ 450 դոլար: ՊԵԿ փոխնախագահի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 30 մլն 432 հազար դրամ, որից 17 մլն 193 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ ՊԵԿ-ից, նա նաեւ 887 հազար դրամ է ստացել կրկին ՊԵԿ-ից, ըստ երեւույթին, բնակարանի հիփոթեքը մարելու համար: Նրա եկամուտների մյուս մասը եղել են վարկերը: Ըստ հայտարարագրի՝Մանուկյանը 11 հազար 500 դոլար հատկացրել է նվիրատվությանը, իսկ դստեր՝Քսարիկ Մանուկյանի հայտարարագրից էլ հասկանում ենք, որ հենց իրեն էլ փոխանցված է այդ նվիրատվությունը: Արթուր Մանուկյանը հանդիսանում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝Նիկոլ Փաշինյանը ամեն անգամ անտեղի ու կեղծ պատճառաբանություններով խուսափում է Արցախի վտարանդի կառավարության հետ շփումներից, այլ կերպ ասած՝արհամարհում է նրանց: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝Ադրբեջանի ռազմական ագրեսիայից հետո Հայաստան տեղափոխված Արցախի բարձրաստիճան պաշտոնյաները՝նախագահ Սամվել Շահրամանյանը, պետնախարար Արթուր Հարությունյանը, ինչպես նաեւ արտգործնախարար Սերգեյ Ղազարյանը, որը դեռեւս Լաչինի միջանցքի շրջափակումից հետո մնացել էր Երեւանում, սպասում են, որ Նիկոլ Փաշինյանն ընդունի նրանց, նրա հետ ճշտեն իրենց անելիքները եւ նոր միայն գործեն: Փաշինյանն էլ ամեն անգամ մի պատճառաբանություն է բերում, որպեսզի խուսափի Արցախի վտարանդի կառավարության հետ հանդիպումից, այսպես ասած, չի ուզում իր վրա պատասխանատվություն վերցնել: Բանն այն է, որ Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանը մտադիր է, ի լուր Հայաստանի եւ Արցախի ժողովուրդների, ինչպես նաեւ միջազգային հանրության, հայտարարել, որ Ադրբեջանի ճնշման տակ է ստորագրել Արցախի լուծարման մասին փաստաթուղթը, ուստի այն ապօրինի է եւ իրավական որեւէ ուժ չունի: Հիմա արցախցի պաշտոնյաները փակուղում են հայտնվել. մի կողմից՝ուզում են քայլեր ձեռնարկել, մյուս կողմից՝չեն ցանկանում առանց ՀՀ իշխանությունների հետ համաձայնեցնելու գործել: Այս իրավիճակում տարօրինակ ու անհասկանալի դիրք է բռնել Ացախի արտգործնախարար Սերգեյ Ղազարյանը: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, վերջինս զանգում է արցախցի նախարարներին ու պատգամավորներին ու ասում, որ իրենց հանրային խոսքում չօգտագործեն Արցախի Հանրապետություն բառը, քանի որ Փաշինյանի խոսնակն էլ հանրային կերպով ներողություն խնդրեց Արցախ բառն օգտագործելու համար, ուստի ցանկալի չէ, որ իրենք օգտագործեն: Այս խոսակցություններից հետո արցախցի պաշտոնյաների եւ Սերգեյ Ղազարյանի հարաբերությունները լարվել են: Մեզ հետ զրույցում Սերգեյ Ղազարյանը կտրականապես հերքեց, որ արցախի պաշտոնյաներին նման բան է ասել. «Բացարձակ սուտ է, նման բան չկա, ես պարզապես ասել եմ, որ հիմա լրիվ այլ իրողություն ունենք եւ պետք է ըստ այդմ շարժվենք. չենք կարող գործել այնպես, ինչպես նախկինում: Ես որեւէ մեկին չեմ ասել՝Արցախ բառը չօգտագործեք»,-ասաց նա: Ղազարյանից հետաքրքրվեցինք՝այս նոր իրողություններում ինքն ինչով է զբաղված, ինչ աշխատանք է տանում: Վերջինս ասաց, որ բռնի տեղահանված արցախցիների խնդիրներով է զբաղվում:



ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՈ՞Ւ ԱՐՑԱԽԸ ՀԱՆՁՆՎԵՑ

«Ադրբեջանը վաղուց էր պլանավորել իր գործողությունները: Անկախ նրանից՝ մենք ինչ կանեինք՝ նոր ընտրություններ կլինեին, թե ոչ, ռազմական էսկալացիան անխուսափելի էր»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց Արցախի ԱԺ պատգամավոր Մեսրոպ Հակոբյանը: Հակոբյանը անդրադարձել է նաեւ վերջին օրերին Արցախում կատարվող իրադարձություններին, Արայիկ Հարությունյանի հրաժարականին, ինչպես նաեւ ԱՀ նախկին նախագահների եւ պաշտոնյաների գերեվարմանը:

-Տիկին Հակոբյան, շատ հարցեր կան, բայց կուզեի սկսեի այն հարցից, թե ինչ կատարվեց Արցախում, ինչու նման ցավալի իրավիճակ ստեղծվեց: Վստահաբար Դուք՝ որպես պատգամավոր, վերջին օրերին տեղի ունեցող քննարկումներին մասնակցել եք: Ի՞նչ էր քննարկվում Արցախում, ու իրավիճակի նման հանգուցալուծում կանխատեսվո՞ւմ էր, թե՞ ոչ:

-Երեք տարի շարունակ իրադարձությունների նման զարգացում միշտ էլ սպասվել է, եւ եթե նայեք մեր խմբակցության գործունեությանը այդ երեք տարիների ընթացքում, կտեսնեք, որ մենք ոչ մի սոցիալական հարցի չենք անդրադարձել, շինարարությամբ եւ տնտեսությամբ չենք հետաքրքրվել, եւ մենք բոլոր հարցերը, քննարկումները, հենց Արցախի ապագայի, անվտանգային հարցերի պատրաստ լինել-չլինելու առնչությամբ ենք բարձրացրել, եւ մեր՝ որպես ընդդիմադիր խմբակցություն լինելու հանգամանքով պայմանավորված՝ մենք հնարավորություն ունեցել եք հարցադրումներ անել, պատասխաններ պահանջել իշխանություններից, նախագահից, ինչը հիմնականում մենք չենք ստացել կամ ստացել ենք անլուրջ պատասխան՝ գուշակության արդյունքում տրված:

Օրինակ՝ երբ հարց էինք տալիս՝ մինչ 2025 թվականը, ենթադրենք, կարողացանք հասնել, եւ միշտ այդ հարցը հենց այդպես է հնչել, որ, ենթադրենք, հասանք, ապա ինչ ենք անելու այդ ժամանակ, քանի որ հարց է դրվելու ռուս խաղաղապահների դուրս բերման մասին:

Պատասխանները եղել են հիմնականում այսպես. «Հանգիստ եղե՛ք, ռուս խաղաղապահները միշտ այստեղ են լինելու, մեզնից հասնում է շինարարություն, տնտեսություն զարգացնել»: Երբ հարցրել ենք՝ կա արդյոք որեւէ հիմք, որը փաստում է այդ ամենը փաստաթղթի վրա, ասվում էր, որ ամեն բան բանավոր ասված է:

Այսինքն՝ ընդհանուր առմամբ, պատերազմից հետո որեւէ բան չփոխվեց, որեւէ լրջություն չեղավ, եւ, գիտեք, երբեմն հարց էին տալիս, թե ինչու էինք պահանջում իշխանությունների հրաժարականը: Սկզբում պահանջ չկար, կար սպասում, որ կլինի գիտակցում, եւ պարտված իշխանությունը, որպես աքսիոմա, կհեռանա, սակայն երբ հասկացանք, որ չի լինելու այդպես, պահանջը եղավ առաջին փուլում, որ պարտված իշխանությունը հեռանա, որպեսզի կարողանանք խոսել ոչ թե հաղթանակի, այլ գոնե հաջողություն գրանցելու մասին:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԴԻՏԱԿԵՏԵՐ ԵՆ ՓԱԿՎԵԼ

Ռուս խաղաղապահները Լեռնային Ղարաբաղում սեպտեմբերի 19-ից՝ Ադրբեջանի լայնածավալ ռազմական ագրեսիայից ի վեր, արդեն փակել են 7 դիտակետ եւ15 ժամանակավոր դիտակետ:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտնել է Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարությունը:

Ռուսաստանի ՊՆ-ից տեղեկացնում են, որ 24 ժամվա ընթացքում փակվել է ռուսական խաղաղապահ զորախմբի մեկ դիտակետ Շուշիի շրջանում:

Ընդհանուր առմամբ, 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ասկերանի, Շուշիի, Մարտունու եւ Մարտակերտի շրջաններում փակվել է ռուս խաղաղապահների 7 դիտակետ եւ 15 ժամանակավոր դիտակետ:

Ադրբեջանը սեպտեմբերի 19-ից Լեռնային Ղարաբաղի դեմ լայնածավալ հարձակում էր սկսել՝ թիրախավորելով նաեւ քաղաքացիական ենթակառուցվածքներ, խաղաղ բնակիչներին: Ջոհվել եւ վիրավորվել էին նաեւ քաղաքացիական անձինք: Սեպտեմբերի 20-ին ԼՂ իշխանություններն ընդունեցին ռուսական խաղաղապահ առաքելություն իրականացնող զորակազմի հրամանատարության առաջարկությունը՝ կրակի դադարեցման վերաբերյալ: Լեռնային Ղարաբաղը հայաթափվել է, բռնի տեղահանված անձինք ժամանել են Հայաստան:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՐՑԵՐ

Էկոնոմիկայի նախարարությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են՝նախարար Վահան Քերոբյանը հոկտեմբերի 13-ին ընդունել է Բելգիայի Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Էրիկ Դե Մույնքին: Հանդիպմանը ներկա են եղել նաեւ նախարարի տեղակալներ Արման Խոջոյանն ու Ռաֆայել Գեւորգյանը:

Հանդիպման ընթացքում զրուցակիցները քննարկել են երկու երկրների միջեւ տնտեսական հարաբերությունների ամրապնդմանը եւ առեւտրաշրջանառության ավելացմանը վերաբերող մի շարք հարցեր:

Համագործակցության առավել նպատակահարմար ոլորտների թվում նշվել են, մասնավորապես, ադամանդագործության, տեղեկատվական տեխնոլոգիաների, դեղագործության, անասնաբուծության, սննդի վերամշակման ոլորտները:

Կողմերը քննարկել են նաեւ գարեջրի, շոկոլադի եւ այլ արտադրատեսակների արտահանման հնարավորությունները:

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ Հայաստանի Հանրապետության առեւտրաշրջանառությունը Բելգիայի հետ, ըստ արտահանող երկրի հատկանիշի, 2023 թվականի հունվար-օգոստոսին կազմել է 156.5 մլն ԱՄՆ դոլար, ինչը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 32%-ով (2022 թվականի հունվար-օգոստոսին կազմել է 118.5 մլն ԱՄՆ դոլար):

ՊԵՏԻ ՆՈՐ ԹԵԿՆԱԾՈՒ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ քրեակատարողական ծառայության պետի պաշտոնի համար հերթական թեկնածուի առաջարկը մերժվել է: Մեզ հասած սեղեկությունների համաձայն՝ ՔՊ-ականների մի հատված արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանին են առաջարկել Ամբակում Գրիգորյանի թեկնածությունը, սակայն նախարար Մինասյանը մերժել է: Մեզ հասած լուրերի համաձայն՝նրան հասկացրել են, որ նա միակ արժանի թեկնածուն է, սակայն դեռ վերջնական որոշում չկա: Նշենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝Քրեակատարողական ծառայության պետի պաշտոնի համար պայքար է գնում: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանն ամեն ինչ անում է, որ այդ պաշտոնին նշանակի իր համակուրսեցի Թադեւոս Նիկոլայի Նալբանդյանին, որը ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի տեղակալներից մեկն է, իսկ, ահա, ուժային կառույցները այլ թեկնածու ունեն: Հավելենք, որ Ամբակում Գրիգորյանը ներկայումս ՔԿ ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատարն է:

ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների հանաձայն՝ գավառցի երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք ցուցաբերած մոր՝ Աննա Արեւշատյանի նկատմամբ իրավապահների ձեռքում հայտնված սարսափելի տեսանյութերից հետո որոշում է կայացվել նշանակել դատահոգեբանական փորձաքննություն՝ պարզելու, թե արդյոք առողջական խնդիրներ ունեն մայրը եւ երեխաները: Ավելին՝մեզ հասած տեղեկությունների համաձայն՝դեռեւս քննությամբ մնում է այն վարկածը, որ մայրը, նման կերպ վարվելով սեփական երեխայի հետ, ունեցել է մեկ նպատակ՝ ապացուցել ամուսնուն, որ պատժել է աղջկան իր դեմ ցուցմունք տալու համար:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝հարուցված քրեական գործով իրավապահները մտել են Նուբարաշենի բանտ ու խուզարկություն իրականացրել: Բանն այն է, որ Աննա Արեւշատյանի ամուսինը՝Թաթուլ Մադաթյանը, կալանավորված է սեփական երեխաների նկատմամբ սեռական բռնություն իրականացնելու համար եւ այս պահին կալանքը կրում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ հենց այս դեպքով էլ Նուբարաշենի բանտում խուզարկություն է իրականացվել, հատկապես՝սեռական բռնություն իրականացրած հոր՝Մանվել Մադաթյանի խցում:

Իսկ ի՞նչ է հայտնաբերվել:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝խցում եղել են հեռախոսներ, Թաթուլ Մադաթյանի մոտ եւս եղել է հեռախոս:

Հիշեցնենք, որ օգոստոսի 18-ին սոցցանցերում երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի մասին տեսանյութ էր հրապարակվել: Ավելի ուշ ՀՀ ոստիկանությունը հայտնել էր, որ կինը հայտնաբերվել է, նա Գավառի 34-ամյա բնակչուհի է: Վերջինիս նկատմամբ նախաձեռնվել էր քրեական վարույթ, օգոստոսի 19-ին մայրը կալանավորվել է եւ գտնվում է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ 2023թ. օգոստոսի 19-ին երեխաների մոր նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել, եւ նրան մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ եւ 6-րդ կետերով (անչափահասին առանձին դաժանությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը): Նրան մեղադրանք է առաջադրվել նաեւ 198-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով (սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, որոնք կատարվել են 12-ից 14 տարին չլրացած անձի նկատմամբ վերընթաց ազգականի կամ այն անձի կողմից, որի վրա դրված է երեխայի դաստիարակության, խնամքի կամ բուժման պարտականությունը): Մեղադրանք է առաջադրվել նաեւ 239-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով (տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով՝ երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու կամ տարածելու հետ կապված գործողություններ կատարելուն հակելը կամ ներգրավելը այն անձի կողմից, որի վրա դրված է երեխայի դաստիարակության, խնամքի կամ բուժման պարտականությունը), 300-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով (պոռնկագրական նյութեր կամ առարկաներ պատրաստելը, տարածելը կամ պահպանելը, որը կատարվել է մերձավոր ազգականի կողմից, եւ որը զուգորդվել է անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքով):

ՌԴ-Ն ՊԱՏՐԱՍՏ Է ԱՋԱԿՑԵԼ

Ռուսաստանը պատրաստ է աջակցել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի ստորագրմանը, կարող է բանակցություններ անցկացնել Մոսկվայում:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ինչպես հայտնում է ՏԱՍՍ-ը, այս մասին հայտարարել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը ԱՊՀ երկրների ղեկավարների նեղ կազմով հանդիպման ընթացքում:

«Օրակարգում խաղաղության պայմանագրի նախապատրաստումն է (խմբ. Երեւանի եւ Բաքվի միջեւ)՝ վերջնականապես վերջ դնելու երկար տարիների հակամարտությանը: Ռուսական կողմն իհարկե պատրաստ է իր գործընկերներին ցուցաբերել հնարավոր ամբողջ օգնությունն այդ հարցում: Մենք, մասնավորապես, համաձայն ենք Մոսկվայում բանակցությունների կազմակերպմանը, անհրաժեշտության դեպքում՝ ցանկացած ձեւաչափով»,- ասել է Պուտինը:

Ըստ Ռուսաստանի նախագահի՝ խոսքը նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների եւ փորձագետների միջեւ բանակցությունների մասին է:

«Մենք, իհարկե, կօգնենք, որ այդ բանակցություններն ավարտվեն այդ երկրների ղեկավարների կողմից ստորագրված խաղաղության պայմանագրով»,- ընդգծել է Ռուսաստանի ղեկավարը:

Նա հավելել է՝ ընտրությունը միշտ համապատասխան երկրներինն է, սակայն Ռուսաստանը պատրաստ է անհրաժեշտ պայմաններ ստեղծել այդ աշխատանքի համար:

Ըստ Պուտինի՝ վերջին 3 տարվա ընթացքում ռուսական կողմը զգալի ջանքեր է գործադրել Լեռնային Ղարաբաղում հակամարտության սրումը կանխելու եւ ռազմական գործողությունները դադարեցնելու համար:

Նա ասել է, որ այս երեք տարիների ընթացքում Հայաստան-Ռուսաստան-Ադրբեջան եռակողմ ձեւաչափում տարվել է քրտնաջան աշխատանք:

ԼՈՒԿԱՇԵՆԿՈՅԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանը միշտ չէ, որ իրեն գործընկերոջ պես է պահում՝ Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) անդամ երկրների հետ կապված»,- երեկ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն հայտարարել է ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարների խորհրդի նեղ կազմով նիստի ժամանակ:

«Վրաստանն առաջինը լքեց մեր ասոցիացիան, դե ֆակտո Ուկրաինան մեզ հետ չէ: Մոլդովայի հետ կապված մեծ հարցեր կան: Ցավոք, Հայաստանը միշտ չէ, որ իրեն գործընկերոջ պես է պահում»,- ասել է նա. փոխանցում է «Բելտա» գործակալությունը:

Հավելենք, որ Բիշքեկում ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստին մասնակցում են Ռուսաստանի, Բելառուսի, Ադրբեջանի, Ղազախստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի եւ Ուզբեկստանի նախագահները: Նիկոլ Փաշինյանը Բիշքեկ չի մեկնել:

ԻՆՉՈՒ

ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ

Երեւանի քաղաքապետարանի նորընտիր ավագանու հատուկ նիստում տեղի ունեցավ Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի երդման հանդիսավոր արարողությունը: Նկատենք, որ Տիգրան Ավինյանի երդման հանդիսավոր արարողությանը ներկա էր Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ 2018 թվականին Երեւանի քաղաքապետ Հայկ Մարությանի երդման արարողությանը ներկա էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն: Ինչո՞ւ է Տիգրան Ավինյանի երդման արարողությանը գնացել Կճոյանը, այլ ոչ թե Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն: Ի պատասխան՝ Մայր աթոռի տեղեկատվական համակարգից «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրին՝ քանի որ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանն Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդն է, այդ իսկ պատճառով էլ նա է գնացել քաղաքապետի երդման արարողությանը:

Այս պատմության մեջ ամենաուշագրավն այն է, որ քաղաքական իշխանությունները, մի կողմից, դատում են Կճոյանին, մյուս կողմից՝ նրան հրավիրում քաղաքապետարան՝ մասնակցելու Տիգրան Ավինյանի երդման հանդիսավոր արարողությանը: Ինչպես հայտնի է, իրավապահ համակարգը նոր գրոհ է սկսել Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի դեմ: Պարզվում է, որ ԱԺ ՔՊ-ական պատգամավորի խնամիները պատերազմ են հայտարարել Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանին: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, այս տարվա հունվարի 23-ին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Նավասարդ (Սամվել) Կճոյանը հրավիրվել էր Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն:

Կճոյանին պատկանող գույքի առնչությամբ իրականացվում է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր, ավելին՝ Նավասարդ Կճոյանի գույքն արգելանքի տակ է դրվել: Բանն այն է, որ իրավապահները հարց են բարձրացրել՝ որտեղից հոգեւորականը, որը չի ունեցել եկամուտ, ունի մեծ ծավալների գույք: Հոգեւորականը բացատրել է, որ դա նա՝ որպես հոգեւորական, ստացել է նվիրատվություն, իսկ, ահա, իրավապահները հոգեւորականին բացատրել են, որ եկեղեցին ասում է՝ այդ նվիրատվությունն իրենը չէ, եկեղեցունն է: Սա էլ դեռ քիչ չէ, հիմա էլ շուրջ 2 տարի առաջվա քրեական գործն է դատախազությունը վերաբացել:

Գլխավոր դատախազությունը հայտնել էր, որ փողերի լվացման համար մեղադրվող Ս. Կ.-ն (խոսքը Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի մասին է, - խմբ.) կրկին մեղադրյալի կարգավիճակ ունի. վերադաս դատախազը վերացրել է քննիչի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը: Բան այն է, որ շուրջ 10 տարի է, ինչ սնանկացած գործարար, օֆշորի սկանդալի գործով առանցքային տուժող Փայլակ Հայրապետյանը պնդում է, որ իրեն պատկանող գույքի դիմաց ստացված մոտ 10 միլիոն դոլարը գործարար Աշոտ Սուքիասյանը, Աֆրիկայում ոսկու եւ ալմաստի արդյունահանման մեջ ներդնելու փոխարեն, փոխանցել է օֆշորում գրանցված մի քանի կազմակերպությունների, այդ թվում՝ WLISPERA HOLDINGS-ին: Կիպրոսի ռեգիստրի պաշտոնական կայքի համաձայն՝ WLISPERA HOLDINGS LIMITED-ի բաժնետերերն են Աշոտ Սուքիասյանը, ՀՀ նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանը եւ Սամվել Կճոյանը: Սուքիասյանը, սակայն, պնդել է, թե նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանը եւ արքեպիսկոպոս Կճոյանը որեւէ կապ չունեն օֆշորային այդ կազմակերպության հետ, եւ որ նրանց ստորագրություններն անձամբ է սարքել: Հիմա այս գործով քննությունը շարունակվում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴԱՏԸ ԿԱՅԱՑԱՎ

Բաքվի Յասամալի շրջանային դատարանում տեղի է ունեցել Լաչինի միջանցքով Հայաստանի Հանրապետություն անցնելու ժամանակ ադրբեջանական սահմանապահ ծառայության աշխատակիցների կողմից ապօրինի առեւանգված՝ Լեռնային Ղարաբաղի բնակիչ Վագիֆ Խաչատրյանի գործով նախադատավարական նիստը:

Ինչպես հաղորդում է «Ժողովուրդ» օրաթերթը, այս մասին հայտնում են ադրբեջանական ՁԼՄ-ները:

Ադրբեջանում Վագիֆ Խաչատրյանին շինծու մեղադրանք են առաջադրել՝ իբր Խոջալուի շրջանի Մեշալի գյուղում «ցեղասպանություն իրականացնելու համար»:

Պետական մեղադրող Մուգադես Սուլթանովը խնդրել է գործը փոխանցել դատարան եւ չփոխել մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցը:

Քրեական գործի քննությունը նշանակվել է հոկտեմբերի 17-ին:

Հիշեցնենք, որ անհետաձգելի բուժօգնություն ստանալու համար Լեռնային Ղարաբաղից Հայաստան տեղափոխվող Վագիֆ Խաչատրյանին Ադրբեջանի սահմանապահ ծառայության աշխատակիցները առեւանգել եւ Բաքու են տեղափոխել 2023թ. հուլիսի 29-ին:

ՈՎՔԵ՞Ր ԿՆՇԱՆԱԿՎԵՆ

Քաղաքապետ ընտրելուց հետո փոխքաղաքապետերի եւ թաղապետերի պաշտոնները բաժանելու ժամանակն է:

Ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» եւ «Հանրապետություն» խմբակցությունները, սակայն, դեռ որոշում չունեն՝ փոխքաղաքապետերի եւ թաղապետերի պաշտոններում ովքեր են նշանակվելու:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ավագանու ՔՊ խմբակցության ղեկավար Արմեն Գալշյանն ասաց, որ դեռ այս հարցով որոշում չունեն, առաջիկայում քննարկում կանեն եւ վերջնական որոշում կկայացնեն:

«Հանրապետություն» խմբակցության ղեկավար Անի Խաչատրյանը նույնպես ասաց, թե փոխքաղաքապետի եւ թաղապետերի պաշտոնների բաշխման հետ կապված հարց չեն քննարկել: «Դեռ նման քննարկում չենք ունեցել: Թե՛ մեր քվեարկությունը, թե՛ կոալիցիան բացարձակ պաշտոնների բաժանման հետ կապ չուներ: Այնպես որ, այդ ամենը երկրորդական է»,-ասաց նա:

ԴԵՍՊԱՆԸ ՀԵՌԱՑԱՎ

Հայաստանում Արգենտինայի արտակարգ եւ լիազոր դեսպան Մարիանո Վերգարան հրաժեշտի գրառում է կատարել: Նա X-ում գրառում է կատարել եւ կցել է Արարատի լուսանկարները՝ արված ինքնաթիռից:

«Շուրջ 3 տարվա ծառայությունից հետո ես այսօր վերջնականապես հեռացա Հայաստանից: Ինքնաթիռի պատուհանից Արարատին նայելիս մտածում եմ՝ ամեն ինչ արել եմ չափազանց դժվար ժամանակներում Արգենտինան ներկայացնելու համար:

Մաղթում եմ ամենալավը քաջ եւ տոկուն հայ ժողովրդին: Իմ սիրտը միշտ կմնա ձեզ հետ»,- գրել է նա:

ԱՎԱՐՏՎԵՑ

ԽՈՇՈՐ ՉԱՓՈՎ ԿԱՇԱՌՔ Է ՍՏԱՑԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ավարտվել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության Լոռու մարզի թիվ 1 բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի նախագահի ու նույն հանձնաժողովի անդամների կողմից երկու տասնյակ բաղաքացուց կաշառք ստանալու դեպքերի առթիվ ՀՀ ԱԱԾ-ում նախաձեռնված, ապա ՀՀ քննչական կոմիտեում քննված քրեական վարույթի նախաքննությունը:

ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչությունում իրականացված անհրաժեշտ վարութային ու քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ հիշյալ հանձնաժողովի նախագահը, նույն հանձնաժողովի անդամ երկու բժիշկ-փորձագետների հետ նախնական համաձայնությամբ, ինչպես նաեւ հանրային ծառայող չհանդիսացող բուժվիճակագրի օժանդակությամբ բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ անձին հաշմանդամ ճանաչելու, հաշմանդամության խումբը որոշելու, տեւողության ժամկետների սահմանման լիազորություններն իրականացնելիս քաղաքացիների օգտին նախընտրելի որոշում կայացնելու, այն է՝ հաշմանդամ ճանաչելու, տեւողության ժամկետը սահմանելու համար, փորձաքննության դիմած, քննությամբ ինքնությունները պարզված 10 եւ ինքնությունները դեռեւս չպարզված եւս 10 անձանցից 2018թ. դեկտեմբերից մինչ– 2019թ. ապրիլի 29-ն ընկած ժամանակահատվածում իրենց աշխատասենյակում պահանջել եւ որպես կաշառք են ստացել խոշոր չափերով՝ 695.000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր անձից 20.000-ից մինչեւ 55.000 ՀՀ դրամ գումարներով:

Այնուհետեւ կաշառք ստացած գումարները հանձնաժողովի նախագահը օրվա վերջում բաշխել է հանցակիցների միջեւ՝ բժիշկ-փորձագետներից մեկին տալով 10.000-ական, մյուս բժիշկ-փորձագետին եւ բուժվիճակագրին՝ 5000-ական դրամ: 2023-ի հոկտեմբերին Լոռու մարզի թիվ 1 բժշկասոցիալական փորձաքննության հանձաժողովի նախագահին վերջնական մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով:

Երկու բժիշկ-փորձագետներին մեղադրանք է ներկայացվել Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ, բուժվիճակագրին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով, իսկ առերեւույթ կաշառք տված Վանաձորի մի բնակչի՝ 436-րդ հոդվածի 1-ին մասով:

Հանձաժողովի նախագահի նկատմամբ, որպես խափանման միջոց, ընտրված է եղել կալանավորումը, որը հետագայում փոխարինվել է գրավով՝ 3.000.000 ՀՀ դրամի չափով: Մյուս չորս մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Առերեւույթ կաշառք տված՝ ինքնությունները պարզված մյուս 9 անձանց նկատմամբ (1-ի պարագայում՝ մահվան, իսկ մյուս 8-ի դեպքում՝ գործուն զղջալու հիմքով) քրեական հետապնդում չի հարուցվել:

Գույքի հնարավոր բռնագրավումն ապահովելու նպատակով կալանք է դրվել մեղադրյալներից երկուսի շարժական եւ անշարժ գույքի վրա, որոշում է կայացվել վերջիններիս պաշտոնավարումը ժամակավորապես դադարեցնելու մասին:

Նշված 5 մեղադրյալի մասով նախաքննությունն ավարտվել է: Նրանց մասով անջատված վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու նպատակով:

Մյուս մասով շարունակվող նախաքննությամբ միջոցներ են ձեռնարկվում առերեւույթ կաշառք տված՝ ինքնությունը չպարզված մյուս անձանց պարզելու, նրանց գործողություններին իրավական գնահատական տալու ուղղությամբ:

ՈՒՇԱԳՐԱՎ

ՏԱՊԱԼԵ՞Լ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Սեպտեմբերի 19-ին իշխանությունը զավթելու եւ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված կոչի համար հերթական անձն է կալանավորվել:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Խաչիկ Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել:

Նա, «Ֆեյսբուք» սոցիալական կայքում ունենալով «Խաչիկ Հակոբյան» անվամբ գրանցված կայքէջ, Արցախի Հանրապետությունում 2023 թվականի սեպտեմբերի 19-ին տեղի ունեցող ռազմական գործողությունների հանգամանքով պայմանավորված, զանգվածային լրատվության միջոցներով, տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելու եղանակով իր ձայնը հասարակության լայն շրջանակներին հասանելի դարձնելու նպատակով 2023 թվականի սեպտեմբերի 19-ին՝ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Այգեստան 41 հասցեում գտնվելու ընթացքում, իր անվամբ գրանցված «Խաչիկ Հակոբյան» կայքէջում ուղղակի դիտավորությամբ կատարել է իշխանությունը զավթելուն եւ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչ:

Նա դրանով խախտել է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ ազատ ընտրությունների, հանրաքվեների, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով պետական իշխանության կազմավորման եւ գործունեության սկզբունքները:

ԽՈՒՍԱՓԵԼ Է ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

Աշոտ Գասպարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 16.03.2019 թվականին կանգնել է զինվորական հաշվառման, պիտանի ճանաչվել զինվորական ծառայության համար եւ ենթակա է եղել պարտադիր զինվորական ծառայության 2021 թվականի ամառային զորակոչին, սակայն, «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն, ստացել է տարեկետում մինչեւ 2022 թվականի ձմեռային զորակոչը:

Այնուհետեւ՝ 26.01.2023 թվականին, ՀՀ կառավարության թիվ 106-Ա որոշմամբ՝ Աշոտ Գասպարյանը 2022 թվականի ձմեռային զորակոչից ստացել է տարեկետում մինչեւ 30.06.2023 թվականը: Այնուհետեւ՝ 2023 թվականի ամառային զորակոչին, Աշոտ Գասպարյանը ներկայացել է տարածքային ստորաբաժանում, պիտանի ճանաչվել զինվորական ծառայության համար, սակայն հրաժարվել է ստանալ 26.06.2023 թվականին պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեկնելու ծանուցագիրը, որպիսի պայմաններում խուսափել է հայտարարված՝ 2023 թվականի ամառային հերթական պարտադիր զինվորական ծառայության զորակոչից:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

ՏԵՂԱՓՈԽՎԵՑ ԿԵՆՏՐՈՆ

Երեւանում մորը եւ քրոջը դանակահարած 48-ամյա կնոջը սեղափոխել են Հոգեկան առողջության կենտրոն: Բանն այն է, որ նա նախկինում հաշվառված է եղել կենտրոնում: Մեզ հայտնի դարձավ, որ դանակահարված 79-ամյա մոր ու քրոջ կյանքին վտանգ չի սպառնում:

Հիշեցնենք, որ shamshyan.com-ը գրել էր, որ հոկտեմբերի 6-ին արտակարգ դեպք էր տեղի ունեցել Երեւանում: Ժամը 17:40-ի սահմաններում «Արմենիա» բժշկական կենտրոնից ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Մաշտոցի բաժին ահազանգ էր ստացվել, որ «զույգ վերին վերջույթների կտրած վերքեր» ախտորոշմամբ իրենց մոտ բուժօգնության է տեղափոխվել մի քաղաքացի:

Կարճ ժամանակ անց նույն բժշկական կենտրոնից ոստիկանության Մաշտոցի բաժին ահազանգ է ստացվում, որ «ձախ գոտկային շրջանի ծակած վերքեր» ախտորոշմամբ իրենց մոտ է տեղափոխվել մի քաղաքացի:

Հիվանդանոցում բժիշկները ոստիկաններին հայտնել են, որ վիրավորները ի վիճակի չեն կատարվածի մասին բացատրություն տալու, քանի որ գտնվում են վիրահատարանում:

Մինչ բժիշկները պայքարում էին վիրավորների կյանքի համար, ոստիկանները պարզել են, որ նրանք են Երեւանի բնակիչներ 79-ամյա Անահիտ Կ.-ն եւ 45-ամյա Լուսինե Կ.-ն:

Մաշտոցի ոստիկանները պարզել են նաեւ, որ նրանց դանակահարել է Երեւանի բնակիչ 48-ամյա Էլեն Կ.-ն:

Դեպքի փաստով ոստիկանության Մաշտոցի բաժնում փաստաթղթեր են ձեւակերպվել, որոնք փոխանցվել են Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների քննչական բաժին. քննությունը շարունակվում է:

ԿՐԱԿՈՑՆԵՐ՝ ՌԵՍՏՈՐԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հոկտեմբերի 12-ի գիշերը կրակոցներ են հնչել «Էրեբունի ամրոց» ռեստորանում:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ռեստորանում վիճաբանություն է եղել, մի խումբ անձինք վիճել են, որից հետո միջադեպի մասնակիցներից մեկը հանել է ատրճանակը ու սկսել կրակել վեճի մյուս մասնակիցների վրա:

Իրավապահները շտապել են դեպքի վայր եւ այս պահին քննում են ռեստորան հաճախած անձանց ինքնությունը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 12-ից 13-ը բացահայտվել է հանցագործության 49 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿՈԲՈՇԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Իջեւան համայնքը՝ ընդդեմ «Կոկ Սիստեմ» ՍՊԸ-ի, Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան հայցադիմում է ներկայացրել նախկին վիճակի վերականգնման՝ ինքնակամ կառույցի քանդման եւ արդյունքում պատճառված վնասի հատուցման պահանջներով: Դատավոր Նարինե Անանյանը հայցը դատարանի վարույթ է ընդունել, Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի նստավայրում այդ հայցով հերթական նիստը նշանակված է նոյեմբերի 16-ին: «Կոկ Սիստեմ» ՍՊԸ-ն պատկանում է գործարար, «Ազատ դեմոկրատներ» կուսակցության նախագահ Խաչատուր Քոքոբելյանի ընտանիքին: Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ հարցնելով, թե ինքնակամ որ կառույցի մասին է դատական հայցը, համայնքապետարանն ինչքան է հաշվարկել պատճառված, հատուցման ենթակա վնասը: Համայնքի ղեկավարը պատասխանել է. «ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող՝ Իջեւան համայնքը՝ ընդդեմ «Կոկ Սիստեմ» ՍՊԸ-ի քաղաքացիական գործով հայտնում ենք, որ «Կոկ Սիստեմ» ՍՊԸ-ի «Կոկ» ՓՀԷԿ-ի գլխամասային հանգույցի մի հատվածը կառուցվել է մակերեսի խախտմամբ՝ հողամասի սահմանների խախտումով, սեփականության իրավունքով Իջեւան համայնքի Լուսաձոր եւ Խաշթառակ բնակավայրերի վարչական տարածքում գտնվող հողամասերում: Պատճառված վնասի չափը որոշելու համար գործով միջնորդել ենք նշանակել դատաապրանքագիտական փորձաքննություն:

80 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ՝ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝նշելով, որ Իջեւան քաղաքում սուբվենցիոն ծրագրով 500 մետր ճանապարհ նորոգելու համար 80 միլիոն դրամ է հատկացվել, այդ ծրագրում որքան գումար է համայնքի ներդրումը, որ փողոցն է նորոգվում այդ ծրագրով, որ կազմակերպությունն է նորոգում, ծրագրով ինչ աշխատանքներ են նախատեսված: Համայնքի ղեկավարի պատասխանում նշված է, որ սուբվենցիոն ծրագրով նախատեսված է կատարել Իջեւան քաղաքի Ղարագյոզյան-Նալբանդյան հատվող խաչմերուկի ասֆալտապատումը: Սուբվենցիոն ծրագրի արժեքը 80 միլիոն ՀՀ դրամ է, որից համայնքի ներդրումը 36 միլիոն ՀՀ դրամ է: Աշխատանքները կատարում է «Վեհ Իշխանասար» ՍՊԸ-ն: Հավելեմ, որ 80 միլիոն դրամը 500 գծամետր, 2500-3000 քառակուսի մետր մակերեսով փողոցի ասֆալտապատման համար շատ մեծ գումար է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ ԿԳՄՄՆ-ն հրապարակել է ուղեցույց, թե ինչպես ստանալ 2023-2024 ուստարվա ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում:

Ով կարող է ստանալ կրթաթոշակ

2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, 2023 թվականի սեպտեմբերի դրությամբ Լեռնային Ղարաբաղի ուսումնական հաստատությունների (պետական կամ մասնավոր) սովորող հանդիսացող եւ համապատասխան մասնագիտություններով (կրթական ծրագրերով) Հայաստանի Հանրապետության պետական ուսումնական հաստատություններում (նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական, բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում կամ կազմակերպություններում/մասնաճյուղերում (այսուհետ՝ ՈՒՀ)) սահմանված կարգով հրամանագրված / տեղափոխված ուսանողները:

Ինչպե՞ս ստանալ կրթաթոշակ

Քայլ 1

Դիմում եք պետական ուսումնական հաստատությանը Ձեր մասնագիտությամբ (եթե այդպիսին չի իրականացվում, ապա հարակից մասնագիտությամբ) ուսումը շարունակելու համար՝ ներկայացնելով հնարավոր ամբողջական տեղեկատվությունը եւ փաստաթղթերը:

Քայլ 2

Ուսումնական հաստատությունը ներգրավում է Ձեզ համապատասխան կրթական ծրագրի դասապրոցեսում, եթե՝

ա) տվյալ կրթական ծրագրում լրացուցիչ սովորողների ներգրավման համար առկա են ֆիզիկական անհրաժեշտ պայմաններ,

բ) եթե կարգով սահմանված կրթաթոշակի առավելագույն չափը բավարարում է տվյալ ուսումնական հաստատությունում տվյալ կրթական ծրագրով ուսումնական պրոցեսում ներգրավվելու համար,

գ) հակառակ պարագայում Դուք կարող եք դիմել նույն ծրագիրն իրականացնող այլ պետական ՈՒՀ կամ ՈՒՀ-ի մասնաճյուղ ՀՀ այլ քաղաքներում:

Քայլ 3

Ուսումնական պրոցեսում Ձեր ներգրավմանը զուգընթաց՝ պետական ուսումնական հաստատությունը կազմակերպում է Ձեր տեղափոխության փաստաթղթավորումը՝ ըստ անհրաժեշտության համագործակցելով այլ մարմինների հետ:

Քայլ 4

Պետական ուսումնական հաստատությունը կազմում եւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանն է տրամադրում կրթաթոշակի շահառուների անվանացանկը՝ նշելով վերջիններիս հետեւյալ տվյալները՝

1) ուսանողի նույնականացման տվյալներ,

2) տեղեկություն՝ տեղափոխված կրթական ծրագրի, մասնագիտության եւ որակավորման մասին,

3) տեղեկություն՝ մինչեւ տեղափոխությունն ուսումնառած կրթական ծրագրի, մասնագիտության եւ որակավորման մասին,

4) կրթական աստիճանը,

5) կուրսը,

6) ուսուցման ձեւը,

7) այլ տեղեկություն՝ ըստ անհրաժեշտության:

Քայլ 5

Նախարարությունը ստուգում է անվանացանկերը, համադրում Միասնական սոցիալական ծառայության գրանցամատյանների հետ եւ ԼՂ համապատասխան ուսհաստատությունից ստացված տվյալների հետ՝ ըստ անհրաժեշտության ճշգրտելով կամ լրացնելով:

Քայլ 6

Ճշգրտված անվանացանկերի հիման վրա՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցները փոխանցվում են ուսումնական հաստատության հաշվին:

Քայլ 7

Դուք եւ պետական ուսումնական հաստատությունը կնքում եք պայմանագիր՝ հատկացված կրթաթոշակի միջոցներով 2023-2024 ուստարվա ուսման վարձի փոխհատուցմանն ուղղելու մասին:

Քայլ 8

Սովորում եք առավելագույն արդյունավետությամբ, քանի որ հետագա ծրագրերը փոխկապակցված են լինելու գերազանց առաջադիմության հետ:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՅԼԴԲԵՐԻԶ»-Ը՝ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ

Բնակիչները տեւական ժամանակ է՝դիմում-բողոքներ են ներկայացնում եւ տարբեր հարթակներում խոսում այն մասին, որ «Վայլդբերիզ» օնլայն գնումների կայքին կցված իրենց անձնական քարտերից անհասկանալի պատճառներով գումար է գանձվում: Այս խնդրի հետ կապված բնակիչների բողոքները «Վայլդբերիզ»-ի կողմից անպատասխան են մնում:

«Ժողովուրդ» օրաթերթին բնակիչը ահազանգել է՝ պատմելով, որ անհասկանալի պատճառով գումար է գանձվել իր հաշվեհամարից, որից հետո էլ ստիպված է եղել քարտը արգելափակել:

«Տեսա, որ քարտիցս 26700 դրամ գումար գանձվեց, հետո ստուգեցի, հասկացա, որ ոչինչ չեմ պատվիրել, բայց «Վայլդբերիզ»-ը այն գանձել է: Գնում եմ «Ինեկոբանկ», քանի որ իրենց ծառայություններից եմ օգտվում, աշխատակիցները նշում են, որ դա իրենց հետ կապ չունի, պետք է հաղորդագրություն ուղարկել «Վայլդբերիզ»-ին՝ հասկանալու համար, թե ինչ է կատավում,- պատմում է բնակիչը:

«Վայլդբերիզ»-ի աշխատակիցները հաճախորհդին պատասխանում են, որ բանկից պետք է կնիքով հաստատված քաղվածք ներկայացնել: Հաճախորդը կատարում է աշխատակիցների պահանջը եւ ուղարկում է քաղվածքը՝ կնիքով հաստատված, սակայն դեռ ոչ մի արձագանք չի ստացել: Այս ամենից հետո հաճախորդը ստիպված է եղել արգելափակել քարտը եւ խնդրել «Ինեկոբանկ»-ին, որ դիմում-բողոք ներկայացնի «Վայլդբերիզ»-ին, որպեսզի հասկանան՝ անհասկանալի պատճառով գանձված գումարը հետ է վերադարձվելու, թե ոչ:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը այս մասին գրել էր՝ բնակիչներին հորդորելու եւ զգուշացնելու, որ զգոն լինեն անձնական տվյալների տրամադրման հարցում:

ՀԵՐԹԵՐ՝ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆՆԵՐՈՒՄ

Երեւան քաղաքի ստորաբաժանումներում անձնագրի հետ կապված ցանկացած հարցի կամ խնդրի դեպքում պետք է նախապես առցանց հերթագրվել՝ ընտրելով համապատասխան անձնագրային ստորաբաժանումը, գործողության տեսակը: Մարզերում այս կարգը դեռ չի գործում, եւ շատերը մայրաքաղաքից շտապում են հարակից գյուղեր կամ քաղաքներ, քանի որ օնլայն գրանցվելու դեպքում պետք է շաբաթներով սպասել:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկություններով՝ բավականին մեծ հերթեր են գոյացել Կոտայքի մարզի քաղաք Բյուրեղավանի անձնագրային բաժնում: Արցախից տեղահանված մեր հայրենակիցները սպասարկվում են առանց հերթի, սակայն հարակից քաղաքներից եւ գյուղերից ժամանելով՝ այնպիսի մասշտաբային հերթեր են գոյանում, որ պարզապես շատ դժվար է լինում սպասարկելը, հատկապես՝ այն դեպքում, երբ ստեղծված իրավիճակում ու պայմաններում տվյալ ստորաբաժանումում ընդամենը մեկ աշխատող է սպասարկում:

Ի դեպ, նշենք, որ սպասող արցախցիների շարքում հիմնականում ելքի վիզա ստացողներն էին:

Բնակիչների մոտ սա դժգոհության պատճառ է առաջացրել, քանի որ 3-ից 4 ժամ լավագույն դեպքում ստիպված են լինում սպասել: Հաճախ էլ լինում են դեպքեր, երբ այդքան սպասելուց հետո այդպես էլ հերթ չի հասնում, քանի որ ընդամենը մեկ աշխատողը ի վիճակի չէ սպասարկելու. նման դեպքերում մարդիկ թողնում, հեռանում են՝ հաջորդ օրվա ակնկալիքով:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 12-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԲԱՑ Է

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԼԱՐՍՈՒՄ

«Հայաստանի արտահանման ընդամենը մոտ 40 տոկոսն է Ռուսաստան գնում, տնտեսվարողները աշխատում են, ամեն ինչ նորմալ է, որեւէ խնդիր չկա, Լարսի անցակետում էլ հերթ չկա»,- հոկտեմբերի 13-ին Երեւանի քաղաքապետարանի դիմաց լրագրողների հետ զրույցում նշեց էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը՝ անդրադառնալով ՌԴ-ի հետ տնտեսական հարաբերություններում հնարավոր խնդիրների վերաբերյալ հարցին:

«Ուզում եմ հիշեցնել, որ անցած տարվա հունիսից հետո՝ իմ եւ ՌԴ տնտեսական զարգացման նախարարի պայմանավորվածություններից հետո, Լարսի անցակետում բազմաթիվ նոր ուղիներ են բացվել, հեշտացվել են պրոցեսները»,-ասաց նա:

Դիտարկմանը, որ մարդիկ դժգոհում են Լարսի անցակետում ստեղծված իրավիճակից, նախարարն ընդգանքեց. «Ընդամենը 2 օր են հարցեր եղել, այդ խնդիրն արդեն չկա»:

Նա հավաստիացրեց, որ վառելիքի հետ կապված խնդիր չկա. «Որոշ խնդիր կար՝ բենզինի հետ կապված, բայց մեր առաջին դիմումը մասնակիորեն բավարարվել է, աշխատում ենք գործընկերների հետ»:

Ինչ վերաբերում է բենզինի գներին, Քերոբյանն ասաց, որ այդ առումով ոչինչ չի կարող ասել, քանի որ գները շուկայից են կախված:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ պարբերաբար ահազանգ է ստանում, որ Լարսի անցակետում հայերին թույլ չեն տալիս անցնել Ռուսաստանի սահմանը: Քաղաքացիները կարծում են, որ սա ռուսական կողմի վրեժն է Հայաստանի հակառուսական հայացքների պատճառով: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ պատճառը Լարսի անցակետում կանգնած՝ հայկական կոնյակով բարձված բեռնատար մեքենաներն են եղել, որոնք Ռուսաստանը կանգնեցրել էր կոնյակի որակը ստուգելու համար:

Մենք կապ հաստատեցինք Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության մամուլի քարտուղար Սոնա Հարությունյանի հետ, որը պարզաբանեց. «Ոչինչ չեմ կարող ասել, խնդիրը մեր տիրույթում չէ, այն լոգիստիկ խնդիր է: Մեքենաներ կուտակված չկան, կուտակված են միայն կոնյակով բեռնված մեքենաները: Նրանք այդ մասին պարզաբանել են»:

Հիշեցնենք, որ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը հայտնել էր, որ պատճառը ռուսական կողմը հայտնել է. ստուգումներ են իրականացնում կոնյակի որակի հետ կապված: Նրա հայտարարությունից առաջ ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից մաքսային կցորդ Վահան Հակոբյանը նշել էր, որ խոսքը Հայաստանից Ռուսաստան գնացող՝ կոնյակով բեռնված շուրջ 60 բեռնատարի մասին է:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

«Ատաստ Ֆուդ» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեվ նշված շարժական եվ անշարժ գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 09.10.2023 թվականին ժամը 14:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական եւ անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 3 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Աղբերք համայնք, փող. 13, հողամաս 11 բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2626848:

Մեկնարկային գին՝ 457,536 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24,26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2290379:

Մեկնարկային գին՝ 560,481 ՀՀ դրամ:

Լոտ 19 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված կաթսայատուն ընդհ. (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մեկնարկային գին՝ 122,038 ՀՀ դրամ:

Լոտ 20 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լվացման հոսքագիծ (տեխնիկական վիճակը՝ անսարք)

Մեկնարկային գին՝ 108,478 ՀՀ դրամ:

Լոտ 26 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված միրգ տրորող սարք (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մեկնարկային գին՝ 13,559 ՀՀ դրամ:

Լոտ 27 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ջարդիչ (տեխնիկական վիճակը՝ անսարք)

Մեկնարկային գին՝ 9,491 ՀՀ դրամ:

Լոտ 32 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված թրթուրավոր շղթա (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մեկնարկային գին՝ 32,543 ՀՀ դրամ:

Լոտ 35 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված հյութ լցնող սարք (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մեկնարկային գին՝ 40,679 ՀՀ դրամ:

Լոտ 36 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լաբորատոր սարք (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մեկնարկային գին՝ 13,559 ՀՀ դրամ:

Լոտ 37 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒ,անող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ավտոկլավ փոքր երկու հատ (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մեկնարկային գին՝ 35,255 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկաներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480102725520000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեվ նշված շարժական գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 02.11.2023 թվականին ժամը 15:00-ին ք?Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0719/04/20 սնանկության գործով 04.09.2020 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «Մուռմել-Արմանի» ՍՊԸ ստորեւ նշված շարժական գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 2 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18-430 տիպարի, 2004թ. արտադրության, 632 US 65 պետհամարանիշով, նարնջագույն, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH13ZZ15M400073, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 4,605,822 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «LECITRAILER» մակնիշի, D 2440 տիպարի, 2000թ. արտադրության, 228 L 01 պետհամարանիշով, գույնը՝ սպիտակ, թափքի տեսակը՝ սառնարան, ՏՄ տեսակը՝ կիսակցորդը (նույնացման համար՝ VV1F3FA1XSN097823, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 5,255,361 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18.430 տիպարի, 2006թ. արտադրության, 090 PP 96 պետհամարանիշով, գույնը՝ դեղին, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH13ZZ97M464106, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 5,314,410 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18-430 տիպարի, 2005թ. արտադրության, 756 US 65 պետհամարանիշով, գույնը՝ կարմիր, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH06ZZ85M423273, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 5,019,165 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480103421570000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս քան երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (էլ. Փոստ՝ makaryeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ «ՄԱԼԵՆԱ» ՖԻԼՄԻՑ

Հոկտեմբերի 30-ից 16 մասից բաղկացած «Մալենա» ֆիլմը կհայտնվի եթերում: Ֆիլմի պրոդյուսերը Սոս Կարապետյանն է, տնօրենը՝ Անի Երանյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ բացառիկ զրույցում Սոս Կարապետյանը մանրամասներ է պատմել ֆիլմից:

«Արդեն 3.5 տարի է՝ ապրում եմ Միացյալ Նահանգներում, եւ այստեղ իմ նկարահանած ֆիլմերից «Մալենան» 9-րդն է», -նշել է նա:՝

Սոսի խոսքով՝ «Գործարք՝ Վեգասում»-ից հետո, որը մեծ հաջողություն ունեցավ, Անի Երանյանին առաջարկվել է, որ, բացի որպես դերասան հանդես գալը, նաեւ հանձն առնի ֆիլմի ղեկավարումը՝ որպես տնօրեն:

Ֆիլմն ուրույն ոճ ունի. Անին ու Սոսը համատեղ որոշել են փոփոխություններ կատարել, եւ հեռուստադիտողը էկրաններին արդեն կտեսնի կրիմինալ դրամա:

Նկարահանումները արդեն չորս ամիս է՝ ընթացքի մեջ են: Մայամի, Լոս Անջելես, Մեքսիկո եւ այլ քաղաքներ, շուրջ 36 նկարահանման հրապարակ, բարդ նկարահանումներ...

«Մեծամասշտաբ այս ֆիլմը պրոֆեսիոնալ աշխատանքի արդյունք է»,- ընդծում է Սոս Կարապետյանը.

«Մեծ թիմ է աշխատել այս ֆիլմի վրա, միայնակ հաջողել չէինք կարող: Շատ բարդ նկարահանումներ ենք ունեցել, որոնց տակից պատվով ենք դուրս եկել, որի համար շնորհալակություն եմ ուզում հայտնել իմ թիմին: Մենք, մի բռունցք ենք դարձած, կարողացել ենք այս դժվար ճանապարհ, անցնել», - հավելեց նա:

Ներկայացնելով մանրամասներ նկարահանումներից՝ Սոսը պատմում է, որ վտանգավոր նկարահանումներ եւս ունեցել են, օրերով անտառներում են մնացել, 18 հոգով Մայամի են մեկնել, որտեղ չափազանց շոգ է եղել: Դիզայները որոշել է, որ բաց եւ կարճ շորեր չպիտի հագնեն դերասանները, քանի որ ֆիլմը դրա մասին չէ, լուրջ աշխատանք է տարվել, դա եւս դժվարություններ է առաջացրել:

Փակագծերը չբացելով՝ պրոդյուսերը պատմում է, որ ֆիլմը մի ընտանիքի մասին է, որտեղ փոքրիկ Մալենան, որի կերպարը կերտում է հենց Անի Երանյանը, կորցնում է ծնողներին, նրանց սպանում են, եւ աղջիկը փորձում է ամեն ինչ անել, որ գտնի այն մարդուն, որն իրականացրել է սպանությունը, եւ վրեժ լուծի: Ֆիլմի հետաքրքրությունը կայանում է նրանում, որ սպանողը բավականին լուրջ մարդ է՝ մաֆիոզ:

Ֆիլմի գլխավոր հերոսներին մարմնավորում են Անի Երանյանը, Գարիկ Չեպչյանը, Սոս Կարապետյանը, Պապ Պողոսյանը, Ջուլիանա Հարությունյանը եւ այլք:

Ռոժիսորը Արտյոմ Հարությունյանն է, երկրորդ ռեժիսորը Անի Միսակյանն է, բեմադրող օպերատորը՝ Ռոբերտ Խաչիկյանը, ֆիլմի սցենարն էլ վստահվել է Անի Մաղաքյանին:

«Ես իմ բոլոր նախագծերը իրականացրել եմ US Armenia-ի հետ համատեղ, որի հետ համագործակցում եմ արդեն երկար տարիներ, ինչ գտնվում եմ Միացյալ նահանգներում: Շնորհակալ եմ աջակցելու ու օգնելու համար», - հավելեց նա:

Խոսելով իր իսկ մարմնավորած կերպարի մասին՝ Սոս Կարապետյանը բացահայտում է. ֆիլմում դրական կերպարի է մարմնավորելու՝ Մալենայի ոչ հարազատ եղբորը, իսկ թե ինչպես է մարմնավորել, թողնում է հեռուստադիտողի դատին:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մոնտենեգրոյի Բուդվա քաղաքում ընթացող բռնցքամարտի Եվրոպայի գավաթի խաղարկությունում Հայաստանը կիսաեզրափակչի 6 մասնակից կունենա:

Քառորդ եզրափակչի արգելքը հաղթահարել եւ առնվազն բրոնզե մեդալ են ապահովել Բարեղամ Հարությունյանը (48 կգ), Ռուսլան Ասլիկյանը (54 կգ), Արթուր Բազեյանը (57 կգ), Ռաֆայել Հովհաննիսյանը (86կգ) եւ Նարեկ Մանասյանը (92 կգ): Հայաստանի մյուս ներկայացուցիչ, 51 կգ քաշային Ռուդոլֆ Գարբոյանը պայքարը կսկսի կիսաեզրափակիչ փուլից՝ ապահովելով առնվազն բրոնզե մեդալ:

Բարեղամ Հարությունյանը մեկնարկային մենամարտում 5:0 հաշվով առավելության է հասել լեհ Յակուբ Սլոմինսկիի նկատմամբ, Ռուսլան Ասլիկյանը պարտության է մատնել Սլովակիայի ներկայացուցիչ Տիբոր Կատոնային, Եվրոպայի բրոնզե մեդալակիր Արթուր Բազեյանը քառորդ եզրափակչում 5:0 հաշվով առավելության է հասել Ռումինիան ներկայացնող Ադրիան Ֆլորին Պրեդայի նկատմամբ, Եվրոպայի փոխչեմպիոն Ռաֆայել Հովհաննիսյանը քառորդ եզրափակչում նույն՝5:0 հաշվով պարտության է մատնել Բուլղարիայի ներկայացուցիչ Քրիստիան Ստեֆանով Դիմիտրովին, իսկ աշխարհի եւ Եվրոպայի առաջնությունների բրոնզե մեդալակիր Նարեկ Մանասյանը քառորդ եզրափակչում ուժեղ է գտնվել ալբանացի Գելիան Ռայկուից:

Հոկտեմբերի 13-ին հայ բռնցքամարտիկները պայքար են մղել եզրափակչի ուղեգրերի համար:

Ցերեկվա մրցահերթում Բարեղամ Հարությունյանը (48 կգ) մենամարտեց Բուլղարիայի ներկայացուցիչ Էրգյունալ Սեբահտինի հետ, Ռուսլան Ասլիկյանը (54 կգ)՝ Ռուսաստանը ներկայացնող Մաքսիմ Կուզնեցովի հետ, իսկ Ռաֆայել Հովհաննիսյանը (86կգ) ուժերը չափեց բելառուս Ալեքսեյ Ալֆիրոյի հետ:

Երեկոյան մրցահերթում 51 կգ քաշային Ռուդոլֆ Գարբոյանը մրցեց Մալթայի ներկայացուցչի հետ, 57 կգ քաշային Արթուր Բազեյանի մրցակիցը իսպանացի Գաբրիել Էսկոբարն էր, իսկ 92 կգ քաշային Նարեկ Մանասյանը եզրափակիչ դուրս գալու համար պայքարեց Հունաստանի ներկայացուցիչ Վագկան Նանիցանիանի հետ:

Կարեն Աղամալյանի գլխավորությամբ մրցավայր մեկնած մեր մյուս բռնցքամարտիկները՝ Արթուր Ղազարյանը (60կգ), Նարեկ Հովհաննիսյանը (63,5 կգ), Զավեն Գալստյանը (71 կգ), Գուրգեն Մադոյանը (67 կգ), Համբարձում Հակոբյանը (80 կգ) եւ Դավիթ Չալոյանը (+92 կգ), տարբեր փուլերում պարտություններ են կրել եւ դուրս մնացել հետագա պայքարից:

Մրցավայր են մեկնել նաեւ մարզիչ Ռոբերտ Պետրոսյանը, բժիշկ Հարություն Պրազյանը: Եվրոպայի գավաթի խաղարկության մրցավարական անձնակազմում ներգրավված է միջազգային կարգի մրցավար Բագրատ Ավոյանը:

ՍՊՈՐՏ

ՊԵՏՐԱԿՈՎԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Պետրակովը Լատվիայից կրած պարտությունը վերցնում է իր վրա:

«Նախ շնորհավորում եմ Լատվիային արժանի հաղթանակի կապակցությամբ: Այս պարտությունը ես վերցնում եմ ինձ վրա: Սա իմ մարզչական պարտությունն էր: Դեռեւս առավոտյան նախավարժանքին տեսա, որ ինչ-որ բան այն չէ: Գուցե նրանից է, որ ես՝ որպես մարզիչ, չկարողացա համոզել նրանց, եւ նրանք դուրս եկան մարզադաշտ խաղին առանց տրամադրվելու»,- «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ լրագրողների հետ զրույցում ասել է Պետրակովը:

Մասնագետի խոսքով՝ Լատվիայի ընտրանին պայքարեց մինչեւ վերջ եւ հավաքված խաղ ցույց տվեց:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը Եվրոպայի առաջնության ընտրական փուլի 6-րդ տուրում պարտվեց 10-ը ֆուտբոլիստով հանդես եկող Լատվիային 2:0 հաշվով:

Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականը հաջորդ հադիպումը կացկացնի նոյեմբերի 18-ին՝ Երեւանում ընդունելով Ուելսին: Մրցաշարի վերջին խաղում նոյեմբերի 21-ին Հայաստանի ընտրանին կհյուրընկալվի Խորվաթիային:

ԿԱՐԼՍԵՆԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Նորվեգացի գրոսմայստերը սեւ ֆիգուրներով մրցել է համաշխարհային դասակարգման 578-րդ համար, Ղազախստանը ներկայացնող 23-ամյա գրոսմայստեր Ալիշեր Սուլեյմենովի հետ եւ պարտվել է 31 քայլում:

Կարլսենն ունի 1 միավոր: Առաջատարներն են երկուական հաղթանակ տարած ամերիկացի Հիկարու Նակամուրան, հոլանդացի Անիշ Գիրին, հնդիկ Արջուն Էրիգայիսին:

Հայաստանից հանդես է գալիս Էմին Օհանյանը, որը 2 տուրից հետո ունի 1 միավոր:

Մրցաշարին մասնակցում է 160 շախմատիստ, մրցանակային հիմնադրամը 150 հազար դոլար է:

ԱՐԳԵՆՏԻՆԱՆ ՀԱՂԹԵՑ

Ֆուտբոլի 2026թ. աշխարհի առաջնության հարավամերիկյան գոտու ընտրական մրցաշարում մեկնարկել են երրորդ տուրի հանդիպումները:

Արգենտինայի հավաքականը նվազագույն հաշվով պարտության մատնեց Պարագվայի թիմին պորտուգալական «Բենֆիկայի» պաշտպան Նիկոլաս Օտամենդիի գոլի շնորհիվ: Ամերիկյան «Ինտեր Մայամիի» հարձակվող Լիոնել Մեսին Արգենտինայի հավաքականի պահեստայինների թվում էր եւ փոխարինման դուրս եկավ 53-րդ րոպեին:

Բրազիլիայի հավաքականը տանը մրցեց Վենեսուելայի հետ եւ հաղթանակը բաց թողեց վերջին րոպեներին: Գրանցվեց ոչ-ոքի՝ 1:1:

Արգենտինայի հավաքականը 9 միավորով գլխավորում է մրցաշարային աղյուսակը, Բրազիլիան երկրորդն է՝ 7 միավոր:

● *Հոկտեմբերի 15-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Թափանցիկ քաղաքի հեքիաթը» ներկայացումը: Տոմսերի արժեքը 2000-4000 դրամ: Սկիզբը՝ ժամը 13:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Նախորդ վարկային պայմանագրով սահմանված վճարումները կատարել եմ ուշացումներով: Արդյունքում ձեւավորվել է վատ վարկային պատմություն, որի պատճառով բանկերը հրաժարվում են ինձ հետ նոր վարկային պայմանագիր կնքել: Ուզում եմ իմանալ՝ արդյոք մեզ չեն կարող նոր հնարավորություն տալ:

Կարեն Պետրոսյան (45 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կ. Պետրոսյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ վարկային պայմանագիրը չի հանդիսանում հրապարակային պայմանագիր, հետեւաբար վարկատուն (բանկը կամ այլ վարկային կազմակերպություն) ինքն է ազատորեն որոշում՝ ում հետ կնքել վարկային պայմանագիր, ում հետ՝ ոչ: Այսինքն՝ վարկատուն, գնահատելով Ձեր վարկունակությունը՝ վարկը մարելու հնարավորությունը, ինքն է որոշում՝ Ձեզ հետ կնքել վարկային պայմանագիր, թե ոչ:

Ձեր վարկային պատմությունը բարելավելու համար պետք է ամբողջովին մարեք նախկինում գոյացած ժամկետանց վարկային պարտավորությունները, իսկ ներկա պահին գործող վարկերի մասով անհրաժեշտ է բացառել ժամկետանց՝նույնիսկ մեկ օրվա կտրվածքով պարտավորությունների գոյացումը:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնում ենք, որ վարկային տեղեկատվությունը կամ «վարկային պատմությունը» վարկառուի վերաբերյալ վարկային տեղեկատվությունն է, որը բնութագրում է վերջինիս կողմից ստանձնած վարկային պարտավորությունների մասով պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները կամ պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ: Գործնականում «վատ վարկային պատմությունը մաքրել» նշանակում է ընթացիկ վարկային զեկույցներում չունենալ խնդրահարույց վարկեր:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞ր դեպքում են դադարեցվում համայնքի ղեկավարի լիազորությունները եւ ի՞նչ ընթացակարգով:

Վլադ Ենոքյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարի լիազորությունները դադարեցվում են համայնքի ավագանու կողմից՝ իր ընդունած որոշման կամ կազմած արձանագրության հիման վրա այն դեպքերում, երբ համայնքի ղեկավարը.

- համայնքի ղեկավարը հրաժարական է տվել,
- դադարեցվել է համայնքի ղեկավարի՝Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,
- համայնքի ղեկավարը դադարել է համայնքի բնակիչ լինելուց,
- դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով համայնքի ղեկավարը դատապարտվել է ազատազրկման եւ կրում է պատիժը,
- դատարանի՝օրինական ուժի մեջ մտած վճռով համայնքի ղեկավարը ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,
- համայնքի ղեկավարն անհամատեղելի պաշտոն է զբաղեցնում:

ՀՀ ՏԿԵՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարի լիազորությունները դադարեցվում են համայնքի ավագանու կողմից՝ իր ընդունած որոշման կամ կազմած արձանագրության հիման վրա նաեւ այն դեպքերում, երբ համայնքի ղեկավարը.

- վեց ամիս անընդմեջ չի հրավիրում համայնքի ավագանու նիստ,
- մահացել է:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի սամբոյի ֆեդերացիան ներկայացրել է նոյեմբերի 10-12-ը Երեւանում կայանալիք սամբոյի աշխարհի առաջնության տարբերանշանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ________________
Ազգանուն՝ ________________
Առաքման հասցե՝ ________________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ________________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 2 +14 + 16	Արարատ	+ 6 + 8 + 19 + 22
Կոտայքի լեռներ	- 2 + 3 +13 + 16	Արմավիր	+ 5 + 7 + 19 + 23
Կոտայքի նախալեռներ	+ 3 + 5 +15 + 19	Վայոց ձորի լեռներ	- 1 + 2 +14 + 17
Գեղարքունիք	- 1 + 3 +13 + 17	Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 8 +18 + 20
Լոռի	- 2 + 2 +13 + 16	Սյունիքի հովիտներ	+ 6 + 9 +19 + 22
Տավուշ	+ 2 + 6 +15 + 19	Սյունիքի նախալեռներ	0 + 3 +14 + 18
Արագածոտնի լեռներ	- 1 + 2 +11 + 15	ԼՂՀ	+ 5 + 9 +19 + 23
Արագածոտնի նախալեռներ	+3 + 6 + 16 + 19	Երեւան	+ 6 + 9 + 19 + 22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.10.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*